ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/169-2»

ք. Երևան «05» 10 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինարար Գագիկ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գագիկ Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **կրթական օբյեկտների հիմնանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետ է սահմանվում 2020 թ դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ

վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 14991111 (տասնչորս միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար մեկ հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011027969 ՀՎՀՀ 02698732	«Շինարար Գագիկ» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Ֆրունզե 12, բն. 34 Հեռ.՝ +37477-43-20-89 Էլ. փոստ՝ chinarargagik@yandex.ru «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ 1150000300290100 ՀՎՀՀ 02201517
Գլխավոր քարտուղարի տեղակալ՝	**Տնօրեն՝**
Վ. Գասպարյան	**Գ. Պետրոսյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«05» 10 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/169-2» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 2. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-2

«ԵՐԵՎԱՆԻ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

h/h	Հիմնա-վորում	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակը	Միավորի ընդհանուր արժեքը (ՀՀ դրամ)	Ընդամենը (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6	7
		ԲԱԺԻՆ-1				
		I. Սպորտ դահլիճի համաշինարարական աշխատանքներ				
		1. Քանդման աշխատանքներ				
1	46-102	Սպորտդահլիճի փայտե հատակի քանդում, տափագերաններով	մ²	126.04	1200	151248
2	18-109 q=0,8	Ջեռուցման թուջե մարտկոցի ապամոնտաժում, Պահպանելով /հետագա տեղադրումով/	Սեկց	60.0	2400	144000
3	8-599-1	Լուսամուտների ապամոնտաժում	Հատ	10	2000	20000
4	14-320	Հին ներկի մաքրում պատերից և առաստաղից	մ²	466.37	1200	559644
5	4635	Պատերից և առաստաղից վնասվածգաջե սվաղի քանդում	մ²	253.36	650	164684
6	46-124	Փայտե դռների քանդում	մ²	27.5	1500	41250
7	Р23-173	Փայտե վիտրաժե պատերի քանդում	մ²	20.18	2500	50450
8	Р19-2	d=80մմ խողովակաշարի ապամոնտաժում	մ	7.00	800	5600
9	Р13-5	Հաղճասալերի քանդում պատերից g/ավազե սվաղի հետ միասին	մ²	36	820	29520
10	46-109	Կերամիկական սալիկներից հատակների քանդում	մ²	12.0	820	9840
11	46-119 46-120	Ցեմենտավազե հարթաշերտի քանդում	մ²	228.2	650	148330
12	П19-74	Թուջե հոսակների ապամոնտաժում	հատ	2	1000	2000
13	П19-69 П19-5	Լվացարանների հանում ծորակով	հատ	2	3000	6000
14	17-71 q=0, 6	Ասիական զուգարանակոնքերի քանդում	հատ	2	5000	10000
15	Р19-1	d=15-32 մմ մետաղական խողովակաշարի ապամոնտաժում	մ	20	800	16000
16	П23-77	Շին աղբի մաքրում և դուրս բերում շենքից, կոտակում	տ	42.0	2800	117600
17	С310-13տ. մ.կ29	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13 կմ	տ	42.0	2500	105000
		Ընդամենը				**1581166**
		2. Հատակներ				
1	Շուկա	Ինքնահարթեցնող շերտի պատրաստում 10 մմ հաստությամբ	մ²	157.28	3000	471840
2	Շուկա	Պվք ծածկույթի իրականացում 0,7 մմ հմոգեն պաշտպանիչ շերտով,հաստ.2 մմ	մ²	157.28	13000	2044640

		/տեղադրումը տեղափոխումը գնի մեջ,գծանշումով/				
3	11-55	Ցեմենտե հարթեցնող շերտ 40 մմ հաստությամբ	մ²	228.2	2000	456400
4	11-252	Շրիշակների տեղադրում պրեսգրանիտից 10 սմ բարձրությամբ	մ²	24.42	8500	207570
5	11-218	Հատակների երեսապատում կերեմիկական սալիկներով	մ²	70.92	9500	673740
		Ընդամենը				**3854190**
		3. Դռներ և պատուհաններ				
1	Շուկա	Դուռ ալյումինե պրոֆ. 60 մմ հաստ.,սպիտակ գույնի ալյումինե փաթեթով	մ²	6.94	60000	416400
2	Տեղեկ.	Մետապլաստե, խուլ պրոֆիլներից, սպիտակ դռներ, ներառյալ սարքերը	մ²	20.56	36000	740160
		Ընդամենը				**1156560**
		4. Համաշինարարական աշխատանքներ				
1	15-246-1	Պատեիր և շեպերի բարելավված սվաղ գաջե շաղախով	մ²	40.36	2800	113008
2	15-264	Պատերի բարձորակ սվաղ ցեմենտավազե սվաղով, մետաղական ցանցով	մ²	180.52	2800	505456
3	E8-169	10 սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ²	20.180	4200	84756
4	E8-59	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն.	0.040	380000	15200
5	P14-418	Պատերի և շեպերի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ	մ²	575.83	2300	1324409
6	P11-187	Առաստաղի քսահարթում գաջով	մ²	39.6	2400	95040
7	P14-419	Առաստաղի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ²	216.17	2600	562042
8	34389	Կախովի առաստաղի տեղադրում նրբատախտակով /ֆաներա/ մետաղական պրոֆիլներով	մ²	126.04	14000	1764560
9	15-92	Պատերի երեսապատում հախճասալիկով	մ²	53.2	8500	452200
10	34-323 34-350	Կախովի առաստաղ սանհանգույցներում պլաստմասսայե շերտապրոֆիլներից, հիմնակմաղքի պատրաստմամբ /նաև առաջին հարկի ապամոնտաժված հատվածում/	մ²	24.0	7000	168000
11	E7-735	Մետաղական ճաղավանդակի իրականացում	մ	4.0	18000	72000
12	P9-22 Գ=0.8	Փայտե բռնածողերի տեղադրում	մ	4.0	2500	10000
13	17-144	Ջեռուցման թուջե մարտկոցների լվացում և վերատեղադրում 60 սեկց	կոմպ.	5.0	5000	25000
14	15-614	Մետաղական մասերի 2 շերտ յուղաներկում	մ²	50.0	1400	70000
15	16-56	Պողպատե էլ. եռակցված խողովակներ Φ76*3մմ	մ²	26.6	338	9000
16	8-194	Գույքային տախտակամածի տեղադրում և քանդում (H=5,5 մ)	մ²	126.04	1600	201664
		Ընդամենը				**5472335**
		5. Ներքին ջրամատակարման ցանց				
1	16-261	Մետաղապլաստե խողովակների մոնտաժում Φ16*2մմ, ձևավոր մասերի տեղադրմամբ և փորձարկմամբ	մ	20.0	2500	50000
2	E17-28	Լվացարանի տեղադրում	կետ	2.0	24000	48000
3	E17-53	Լվացարանի ծորակի տեղադրում	հատ	2.0	5000	10000

4	E17-53	Ծորակ խառնիչի տեղադրում	հատ	2.0	8000	16000
5	E17-61	Ասիական զուգարանակոնքի տեղադրում	կետ	4.0	25000	100000
6	E17-36	Հոսակի տեղադրում	հատ	3.0	2600	7800
7	Տեղեկ.	Փական ջրի Փ15մմ	հատ	6	1500	9000
8	Տեղեկ.	Նույնը, Փ32մմ	հատ	1	2000	2000
9	16-211	Միացում գործող ջրագծին Փ32մմ	տեղ	1	6000	6000
10	Տեղեկ.	Ծորակի տեղադրում	հատ	2	3000	6000
		Ընդամենը				**254800**
		Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-1				**12319051**
		ԲԱԺԻՆ-2				
		II. Սպորտ դահլիճ էլ. մոնտաժային աշխատանքներ				
1	8-591-2	Միաբեռ անջատիչ միատեղ փակ հաղորդալարի համար	հատ	11	2000	22000
2	8-591-8	Միաբևեռ երկտեղանոց վարդակ հողանցման հպակով պատի մեջ տեղադրվող 40Ա	հատ	2	2500	5000
3	8-599-1	Լուսակալ /փոշի և ջուր չթափանցող/ էներգոխնայող լյմինեսցենտային լամպերով2*18 վտ հզորությամբ	հատ	4	20000	80000
4	8603-1	Լուսարձակիչ ԼԵԴ 500վտպաշտպանիչ ցանցով	հատ	4	23000	92000
5	8603-1	Լեդ լուսատու 1195*180*50մմ, 3950K, 4650LM, 36watt	հատ	7	30000	210000
6	8603-1	Լեդ լուսատու Փ183մմ, 4000K, 3500LM, 35watt	հատ	2	12000	24000
		Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-2				**433000**
		ԲԱԺԻՆ-3				
		III. Սպորտ հրապարակի բարեկարգման աշխատանքներ				
1	1-1586	Ա/բ խախկոյթի քանդում հարվախող մուրճով	$մ^3$	1.5	4000	6000
2	Ռ23-228 ԳՆ.3 էջ 50	Ավելերդ գրունտի ձեռքով բարձում ա/ինքնաթափի վրա և տեղափոխում 5 կմ	տ	2.6	2600	6760
3	Ռ16-4	Փոսային նորոգում մանրահատիկ ասֆալտբետոնով H=3սմ	$մ^2$	30.4	3000	91200
4	27-164-2 27-165-2	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթ H=3սմ	$մ^2$	647.0	3300	2135100
		Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-3				**2239060**
		Ընդամենը				**14991111**

***Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան, Գլինկայի 2 հասցեում**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- **Վ. Գասպարյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

---------- **Գ. Պետրոսյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 2
«05» 10 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/169-2» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

Չափաբաժին 2. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-2

«ԵՐԵՎԱՆԻ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱՃԵՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետ	
		Սկիզբ	Ավարտ
	Բաժին-1		
	Սպորտ դահլիճի համաշինարարական աշխատանքներ		
1	Քանդման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2020 թ դեկտեմբերի 1-ը ներառյալ:
2	Հատակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2020 թ դեկտեմբերի 1-ը ներառյալ:
3	Դռներ և պատուհաններ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2020 թ դեկտեմբերի 1-ը ներառյալ:
4	Համաշինարարական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2020 թ դեկտեմբերի 1-ը ներառյալ:
5	Ներքին ջրամատակարարման ցանց	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2020 թ դեկտեմբերի 1-ը ներառյալ:
	Բաժին-2		
	Սպորտ դահլիճի էլ.մոնտաժային աշխատանքներ		
1	Սպորտ դահլիճի էլ.մոնտաժային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2020 թ դեկտեմբերի 1-ը ներառյալ:
	Բաժին-3		
	Սպորտ հրապարակի բարեկարգման աշխատանքներ		
1	Սպորտ հրապարակի բարեկարգման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2020 թ դեկտեմբերի 1-ը ներառյալ:
	Ընդամենը	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը**	**2020 թ դեկտեմբերի 1-ը ներառյալ:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գ. Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 3
«05» 10 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/169-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին, պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում***				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
2	45611100/54	**Կրթական օբյեկտների հիմնանորոգում-2** «Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքներ	14991111	14991111	14991111	14991111	**14991111**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գ. Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 4
«05» 10 2020թ. կնքված
«ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/169-2» ծածկագրով պայմանագրի

ԿԱՊԱԼԻ ՕԲՅԵԿՏԻ, ԴՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ (ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ և ԱՅԼՆ) և ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼԻՔ ՆՅՈՒԹԵՐԻ և (ԿԱՄ) ՍԱՐՔԵՐԻ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Չափաբաժին 2. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-2

«ԵՐԵՎԱՆԻ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

«Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքում շինարարական նյութերն ու կոնստրուկցիաները պետք է ունենան **10 (տաս) տարվա երաշխիքային ժամկետ**:

«Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մասնաշենքի մասնակի վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքում սարքերի և սարքավորումների երաշխիքային ժամկետներին **պահանջներ չեն ներկայացվում**:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
---------- Վ. Գասպարյան	---------- Գ. Պետրոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՔԱՆԱՔԵՌ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ “КАНАКЕР”
“ARMBUSINESSBANK” CJSC
“QANAQER” BRANCH

N 1492-32

«02» 10 2020թ

Բենեֆիցիար՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի սպորտի նախարարություն
Պրինցիպալ՝ ՇԻՆԱՐԱՐ ԳԱԳԻԿ ՍՊԸ

ԵՐԱՇԽԻՔ N E20-001828
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/169» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում ՇԻՆԱՐԱՐ ԳԱԳԻԿ ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրիցիպալ) կողմից կնքվելիք N «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/169-2» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 14.991.111 /Տասնչորս միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար հարյուր տասնմեկ/ ՀՀ դրամ գումարի (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/169-2 ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 01.փետրվարի.2021թ.:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/169-2 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի 72/9; Հեռախոս՝ (+37460) 37 25 32; Էլ.փոստ՝ qanaqer@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: З.Саркаваг 72/9, г. Ереван, РА; Телефон: (+37460) 37 25 32; Эл.почта: qanaqer@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 72/9 Z. Sarkavag, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 32; E-mail: qanaqer@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ՝ Հայկ Պետրոսյան

ՀՍԳԳ Բաժնի պետի ժ/պ՝ Ժենյա Ավետիքյան

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՔԱՆԱՔԵՌ» ՍԱՄՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ “КАНАКЕР”
“ARMBUSINESSBANK” CJSC
“QANAQER” BRANCH

N 1593-32

«02» 10 2020թ

Բենեֆիցիար՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Պրինցիպալ՝ ՇԻՆԱՐԱՐ ԳԱԳԻԿ ՍՊԸ

ԵՐԱՇԽԻՔ N E20-001829
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ բենեֆիցիար) և ՇԻՆԱՐԱՐ ԳԱԳԻԿ ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/169-2 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1.499.112 /Մեկ միլիոն չորս հարյուր իննսունինը հազար հարյուր տասներկու/ ՀՀ դրամ գումարի (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/169-2 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 01-ը փետրվարի 2021թ.:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/169-2 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավագի 72/9; Հեռախոս՝ (+37460) 37 25 32; Էլ.փոստ՝ qanaqer@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: З.Саркаваг 72/9, г. Ереван, РА; Телефон: (+37460) 37 25 32; Эл.почта: qanaqer@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 72/9 Z. Sarkavag, Yerevan, Armenia; Telephone: (+37460) 37 25 32; E-mail: qanaqer@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ Հայկ Պետրոսյան

ՀԱԴԿ Բաժնի պետի ժ/պ՝ Ժենյա Ավետիքյան